

Ղատական Գործ N: ԵԿԴ/0076/02/11

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	17-01-2011
Հայցվոր/դիմող	
Անուն:	Գարանտոյլ ՍՊԸ
Հասցե:	Երևան, Մաշտոցի 40 բն. 7
Պատասխանող	
Անուն:	Յունիլեր Ն.Վ. ընկերություն
Հասցե:	Վիեննա 455
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն:	ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն
Հասցե:	Գլխավոր պողոտա Կառավարական տուն 3
Պահանջ:	Մասնակի չեղյալ հայտարարել Յունիլեր Ն.Վ. ընկերության նկատմամբ կուրք ապրանքային նշանների իրավական պահպանությունը՝ մասնավորապես չեղյալ հայտարարել իրավական պահպանությունը սպիտակեցնող նյութեր և այլ նյութեր լվացքի համար, փափկեցնող, մաքրող փայլեցնող, ճարպագերծող նյութեր ապրանքների նկատմամբ
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	13
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Լրացուցիչ պահանջի վիճակագրության տողի համարը:	
Ստացման կարգը:	Առաջին անգամ
Այլ նշումներ:	
Անդորրագրի ներկայացման ամսաթիվ:	17-01-2011
Պետ. տուրք (ՀՀ դրամ):	4000
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	18-01-2011
Նախագահող դատավոր	
Ղատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Ղատավորի անուն:	Սամվել Եփրեմի Թադևոսյան
Ղատավոր	
Ղատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Ղատավորի անուն:	
Այլ նշումներ:	

Որոշման ամսաթիվ:	20-01-2011
Դատաքննության ամսաթիվ:	23-03-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	14-02-2011
Այլ նշումներ:	
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համար:	8
Դատաքննության ամսաթիվ:	07-04-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	23-03-2011
Այլ նշումներ:	
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համար:	8
Դատաքննության ամսաթիվ:	29-04-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	07-04-2011
Այլ նշումներ:	
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համար:	8
Հայցի լուծման ամսաթիվ:	11-05-2011
Հայցի լուծումը:	Բավարարվել է
Հոդված	
Հոդված	ՀՀ քաղ. դատ. օր-ի 130-132
Հակընդդեմ հայցի լուծումը :	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	
Դատական ակտ (վճիռ, որոշում):	<p>Գործ ԵԿԴ 0076/02/11</p> <p>ՎՃԻՌ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ</p> <p>11.05.2011թ. ք. Երևան</p> <p>Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը</p> <p>Նախագահությամբ Սամվել Թադևոսյանի Քարտուղարությամբ Կարինե Սարգսյանի մասնակցությամբ Հայցվորի ներկայացուցիչ Հասմիկ Պապյանի Պատասխանողի ներկայացուցիչ Էդուարդ Նահապետյանի Երրորդ անձ Արա Աբգարյանի Դռնբաց դատական նիստում, դատարանում, քննելով</p>

քաղաքացիական գործն ըստ հայցի «Գարանտոյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /ՀՎՀՀ 02587397, պետական ռեգիստրի գրանցման վկայական 03Ա078518/ ընդդեմ «Յունիլեր Ն.Վ.» ընկերության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության՝ «Յունիլեր Ն.Վ.» ընկերության անվամբ միջազգային գրանցման հիման վրա ՀՀ տարածքում «ԼՅՈՒՔՍ» /«ԼՄՍ»/ ապրանքային նշանների իրավական պահպանությունը՝ մասնակի չեղյալ հայտարարելու պահանջի մասին

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Նկարագրական մաս

1. Դատավարական նախապատմությունը.

«Գարանտոյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան հայց է ներկայացրել ընդդեմ «Յունիլեր Ն.Վ.» ընկերության, խնդրելով մասնակի չեղյալ հայտարարել «Յունիլեր Ն.Վ.» ընկերության անվամբ միջազգային գրանցման հիման վրա ՀՀ տարածքում պահպանվող «Լյուքս» /LUX/ /միջազգային գրանցման համար թիվ 506152, 626016, 814310/ ապրանքային նշանների իրավական պահպանությունը՝ մասնավորապես չեղյալ հայտարարել իրավական պահպանությունը /գրանցումը/ «սպիտակեցնող նյութեր և այլ նյութեր լվացքի համար, փայլեցնող, մաքրող փայլցնող, ճարպազերծող նյութեր» ապրանքների նկատմամբ:

Դատարանի 20.01.2011թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Գործի վարույթն իրականացվել է նախապատրաստական փուլով: Հայցվորը 23.03.2011թ. նախնական դատարան նիստի ընթացքում նվազեցրել է հայցապահանջը և խնդրել մասնակի չեղյալ հայտարարել «Յունիլեր Ն.Վ.» ընկերության անվամբ միջազգային գրանցման հիման վրա ՀՀ տարածքում պահպանվող «Լյուքս» /LUX/ /միջազգային գրանցման համար ապրանքային նշանների իրավական պահպանությունը՝ մասնավորապես չեղյալ հայտարարել իրավական պահպանությունը /գրանցումը/ «սպիտակեցնող նյութեր և այլ նյութեր լվացքի համար» ապրանքների նկատմամբ:

Հայցվորի դիրքորոշումը.

Հայցվորի ներկայացուցիչը նվազեցնելով հայցապահանջը դատարանին հայտնել է, որ 18.06.2010թ-ին «Լյուքս» /LUX/ բառը պարունակող համակցված ապրանքային նշանի գրանցման հայտ են ներկայացրել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն:

Սակայն, փորձաքննության արդյունքում ընդունվել է ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշում, որի հիմքում դրվել է «Յունիլեր Ն.Վ.» ընկերության անվամբ գրանցված «Լյուքս» /LUX/ և միջազգային պայմանագրի ուժով միջազգային գրանցման հիման վրա ՀՀ տարածքում պահպանվող «Լյուքս» /LUX/ շփոթելու աստիճան նման ապրանքային նշանների առկայությունը: Նշված ապրանքային նշանները գրանցվել են համապատասխանաբար 13.03.1998թ., 19.04.1995թ., 15.09.1994թ., 09.09.2003թ.

առաջնությամբ: Նշված ապրանքային նշանները գրանցվել են «Նշանների գրանցման համար ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման Նիցցայի համաձայնագրի» համաձայն ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման 3-րդ դասի տարբեր ապրանքների համար, այդ թվում՝ սպիտակեցնող նյութեր և այլ նյութեր լվացքի համար, փափկեցնող, մաքրող փայլեցնող, ճարպազերծող նյութեր:

«Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ապրանքային նշանի գրանցումը կարող է ցանկացած անձի կողմից ներկայացված հայցի... քննարկման արդյունքում կայացված դատարանի վճռի հիման վրա չեղյալ հայտարարվել բոլոր ապրանքների և/կամ ծառայությունների նկատմամբ, որոնց համար այն գրանցված է, կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված՝ հինգ տարի անընդմեջ, կամ հայցը ավելի ուշ ներկայացնելու դեպքում՝ դրան անմիջականորեն նախորդող հինգ տարի անընդմեջ ժամանակահատվածում ապրանքային նշանն ընդհանրապես չի օգտագործվել կամ իրական օգտագործման մեջ չի դրվել ապրանքային նշանի իրավատիրոջ կամ սույն օրենքի համաձայն՝ այդ իրավունքն ունեցող անձի կողմից», իսկ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ «ապրանքային նշանի գրանցումը կարող է չեղյալ հայտարարվել դատարան ներկայացված համապատասխան հայցի... քննարկման արդյունքում կայացված դատարանի վճռի հիման վրա, եթե ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված հինգ տարի անընդմեջ կամ հայցը ավելի ուշ ներկայացնելու դեպքում դրան անմիջականորեն նախորդող հինգ տարի անընդմեջ ժամանակահատվածում ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում ընդհանրապես չի օգտագործվել կամ իրական օգտագործման մեջ չի դրվել ապրանքային նշանի իրավատիրոջ կամ սույն օրենքի համաձայն՝ տվյալ ապրանքային նշանի օգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այն ապրանքների և/կամ ծառայությունների նկատմամբ, որոնց համար գրանցված է ապրանքային նշանը՝ հաշվի առնելով սույն օրենքի 17-րդ հոդվածի դրույթները»:

Շուկայի ուսումնասիրությունների և տեղեկությունների համաձայն՝ «Յունիլեր Ն.Վ.» ընկերությունը, նշված ապրանքային նշանները «սպիտակեցնող նյութեր և այլ նյութեր լվացքի համար, փափկեցնող, մաքրող փայլեցնող, ճարպագերծող նյութեր» ապրանքների համար չի օգտագործվել և չի օգտագործում ավելի քան հինգ տարի անընդմեջ՝ հայցադիմումը ներկայացնելուց առաջ: Նույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «ապրանքային նշանի օգտագործման ապացույցները ներկայացնում է դրա իրավատերը կամ սույն օրենքի համաձայն՝ տվյալ ապրանքի նշանի օգտագործման իրավունք ունեցող անձը»: Հետևաբար, պատասխանող է հանդես գալիս «Յունիլեր Ն.Վ.» ընկերությունը, քանի որ նա է հանդիսանում ապրանքային նշանի իրավատերը և նա պետք է ապացուցի ապրանքային նշանի օգտագործման հանգամանքը:

Նշված ապրանքային նշանների գրանցումը ու չօգտագործումը խախտում է ապրանքային նշան ունենալու իրենց իրավունքը, քանի որ «Յունիլեր Ն.Վ.» ընկերությունը գրանցելով ու չօգտագործելով գրանցված ապրանքային նշանները ոչ իրավաչափորեն գրկել է իրենց ապրանքային նշան ունենալ իրավունքից: Եթե գրանցվում է ապրանքային նշանը, ապա այն պետք է օգտագործել, այլապես նաև օրենքի համաձայն, այն ենթակա է չեղյալ հայտարարման, քանի որ սահմանափակում է այլ սուբյեկտների կողմից նշված կամ նման ապրանքային նշան ունենալու հնարավորությունից:

Խնդրել է մասնակի չեղյալ հայտարարել «Յունիլեր Ն.Վ.» ընկերության անվամբ միջազգային գրանցման հիման վրա ՀՀ տարածքում պահպանվող «Լյուքս» /LUX/ /միջազգային գրանցման համար ապրանքային նշանների իրավական պահպանությունը՝ մասնավորապես չեղյալ հայտարարել իրավական պահպանությունը /գրանցումը/ «սպիտակեցնող նյութեր և այլ նյութեր լվացքի համար» ապրանքների նկատմամբ:

Պատասխանող «Յունիլեր Ն.Վ.» ընկերության դիրքորոշումը
Պատասխանող «Յունիլեր Ն.Վ.» ընկերության ներկայացուցիչը,
դատարանին հայտնել է հետևյալը.
«Յունիլեր Ն.Վ.» ընկերության անվամբ գրանցված է «Լյուքս» /LUX/
ապրանքային նշաններով սպիտակեցնող նյութեր և այլ նյութեր

լվացքի համար, փափկեցնող, մաքրող փայլեցնող, ճարպագերծող նյութերը, այսինքն հանդիսանում է նշված ապրանքային նշանի իրավատերը:

Սակայն, նկատի ունենալով, որ հայցվոր կողմը նվազեցրել է հայցապահանջը, այն է հայցը պնդել է միայն «Լյուքս» /LUX/ ապրանքային նշանով «սպիտակեցնող նյութեր և այլ նյութեր լվացքի համար» ապրանքների վերաբերյալ ապրանքային նշանների իրավական պահպանությունը չեղյալ հայտարարելու մասով, պատասխանողի ներկայացուցիչը հայտնել է, որ իր վստահորդը չի առարկում հայցի դեմ:

Նա չի առարկում պահանջի դեմ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Յունիվեր Ն.Վ.» ընկերությունը «Լյուքս» /LUX/ ապրանքային նշանով «սպիտակեցնող նյութեր և այլ նյութեր լվացքի համար» ապրանքներ Հայաստանի Հանրապետությունում չի օգտագործում:

Երրորդ անձ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության դիրքորոշումը «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ «ապրանքային նշանի գրանցումը կարող է ցանկացած անձի կողմից ներկայացված հայցի կամ իրավունքների պաշտպանության գործով հակընդդեմ հայցի քննարկման արդյունքում կայացված դատարանի վճռի հիման վրա չեղյալ հայտարարվել բոլոր ապրանքների և/կամ ծառայությունների նկատմամբ, որոնց համար այն գրանցված է, կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված՝ հինգ տարի անընդմեջ, կամ հայցը ավելի ուշ ներկայացնելու դեպքում՝ դրան անմիջականորեն նախորդող հինգ տարի անընդմեջ ժամանակահատվածում ապրանքային նշանն ընդհանրապես չի օգտագործվել կամ իրական օգտագործման մեջ չի դրվել ապրանքային նշանի իրավատիրոջ կամ սույն օրենքի համաձայն՝ այդ իրավունքն ունեցող անձի կողմից»: Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին ենթակետը սահմանում է՝ «ապրանքային նշանի գրանցումը կարող է չեղյալ հայտարարվել դատարան ներկայացված համապատասխան հայցի կամ իրավունքների պաշտպանության գործով հակընդդեմ հայցի քննարկման արդյունքում կայացված դատարանի վճռի հիման վրա, եթե ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված հինգ տարի անընդմեջ կամ հայցը ավելի ուշ ներկայացնելու դեպքում դրան անմիջականորեն նախորդող հինգ տարի անընդմեջ ժամանակահատվածում ապրանքային նշանը ՀՀ ընդհանրապես չի օգտագործվել կամ իրական օգտագործման մեջ չի դրվել ապրանքային նշանի իրավատիրոջ կամ սույն օրենքի համաձայն՝ տվյալ ապրանքային նշանի օգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այն ապրանքների և/կամ ծառայությունների նկատմամբ, որոնց համար գրանցված է ապրանքային նշանը՝ հաշվի առնելով սույն օրենքի 17-րդ հոդվածի դրույթները»:

Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը սահմանում է՝ «Ապրանքային նշանի օգտագործման ապացույցները ներկայացնում է դրա իրավատերը կամ սույն օրենքի համաձայն՝ տվյալ ապրանքի նշանի օգտագործման իրավունք ունեցող անձը»:

Հետևաբար նշված հոդվածների պայմանների առկայությունը կամ բացակայությունը, իրենց կարծիքով, հայցվոր և պատասխանող կողմերի ապացուցման խնդիրն է և դատարանի որոշելու հարցը:

Ուստի, այս փուլում գործակալությունը որևէ դիրքորոշում քննարկվող հարցի վերաբերյալ հայտնել չի կարող:

II. Պատճառաբանական մաս.

Գործի փաստերը.

«Գարանտոյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 18.06.2010թ. հայտ է ներկայացրել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն՝ «Լյուքս» /LUX/ բարը

պարունակող համակցված ապրանքային նշանի գրանցման համար: Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության 04.11.2010թ. որոշմամբ մերժվել է «Գարանտոյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ ապրանքային նշանի գրանցումը՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման պահպանվող «Լյուքս» /LUX/ /«Յունիլեր Ն.Վ.» ընկերություն/ և միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «Լյուքս» /LUX/ շփոթելու աստիճան նման ավելի վաղ ապրանքային նշանների առկայության պատճառաբանությամբ: «Յունիլեր Ն.Վ.» ընկերությունը 22.08.1986թ. /թիվ 506152/; 15.09.1994թ. /թիվ 626016/; 09.09.2003թ. /թիվ 814310/ գրանցել է «Լյուքս» /LUX/ ապրանքային նշանը՝ ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգում ապրանքային նշանների գրանցման նպատակով /Նիցցայի դասակարգում/ -NCL /6/ 03; -NCL /8/ 03; 03 սպիտակեցնող նյութեր և այլ միջոցներ լվացքի մեջ օգտագործման համար; փայլացնող նյութեր, մաքրող, փայլեցնող, յուղերը մաքրող և քերող նյութեր; մաքրիչ և հղկիչ նյութեր; մաքրող նյութեր, որոնք օգտագործվում են ոչ արտադրական գործառնություններում և բժշկական նպատակներով; ձեռքի օձառներ, հեղուկ օձառներ, զուգարանային պարագաներ, այդ թվում լոզանքի փրփուր և գել, միջոցներ սափրման համար և սափրվելուց հետո, օձանելիք, եթերային յուղեր, դեմքի հարդարման միջոցներ, զուգարանային պարագաներ, սպիտակեղենին բույր տվող փոքր տոպրակներ, մասազի և մաշկի հարդարման միջոցներ, դեոդորանտ, հակաքրտնեցնող միջոցներ, ատամի մածուկ; փոշի օձառներ; լվացքի փոշի; սոդա, և ընդհանրապես, լվացքի պարագաներ, ինչպես նաև ամանների լվացման ու մաքրման պարագաներ /ներառյալ սինթետիկ նյութերը/, մաքրաջրող պարագաներ: «Յունիլեր Ն.Վ.» ընկերությունը Հայաստանի Հանրապետության տարածքում չի օգտագործել «Լյուքս» /LUX/ ապրանքային նշանը կրող «սպիտակեցնող նյութեր և այլ նյութեր լվացքի համար» ապրանքների համար:

Վերլուծություն.

Քննելով հայցը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, դատարանը գտավ, որ հայցը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Հայցվորը դիմելով դատարան խնդրել է մասնակի չեղյալ հայտարարել «Յունիլեր Ն.Վ.» ընկերության անվամբ միջազգային գրանցման հիման վրա ՀՀ տարածքում պահպանվող «Լյուքս» /LUX/ /միջազգային գրանցման համար ապրանքային նշանների իրավական պահպանությունը՝ մասնավորապես չեղյալ հայտարարել իրավական պահպանությունը /գրանցումը/ «սպիտակեցնող նյութեր և այլ նյութեր լվացքի համար» ապրանքների նկատմամբ, հիմքում դնելով այն հանգամանքը, որ նշված ապրանքային նշանները՝ «Յունիլեր Ն.Վ.» ընկերության իրավատիրոջ կողմից չի օգտագործվել և չի օգտագործում ավելի քան հինգ տարի անընդմեջ՝ հայցադիմումը ներկայացնելուց առաջ:

Հայցվորի նման պահանջը պայմանավորված է նրանով, որ ինքը ցանկանալով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունում գրանցել «Լյուքս» /LUX/ բառը պարունակող ապրանքային նշանը, վերջինիս կողմից ստացել է մերժում, որով էլ նա զրկվել է ապրանքային նշան ունենալու իր իրավունքից: «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ապրանքային նշանի գրանցումը կարող է ցանկացած անձի կողմից ներկայացված հայցի կամ իրավունքների պաշտպանության գործով քննարկման արդյունքում կայացված դատարանի վճռի հիման վրա չեղյալ հայտարարվել բոլոր ապրանքների և /կամ/ ծառայությունների նկատմամբ, որոնց համար

այն գրանցված է, կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված՝ հինգ տարի անընդմեջ, կամ հայցը ավելի ուշ ներկայացնելու դեպքում՝ դրան անմիջականորեն նախորդող հինգ տարի անընդմեջ ժամանակահատվածում ապրանքային նշանն ընդհանրապես չի օգտագործվել կամ իրական օգտագործման մեջ չի դրվել ապրանքային նշանի իրավատիրոջ կամ նշված օրենքի համաձայն՝ այդ իրավունքն ունեցող անձի կողմից: Ապրանքային նշանի օգտագործման ապացույցները ներկայացնում է դրա իրավատերը կամ նշված օրենքի համաձայն՝ տվյալ ապրանքային նշանի օգտագործման իրավունք ունեցող անձը:

Ինչպես արդեն հայտնի է վիճարկվող ապրանքային նշանի իրավատերն է «Յունիլեր Ն.Վ.» ընկերությունը, որը պարտավոր էր «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի համաձայն ապացույցներ ներկայացնել այն մասին, որ ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված՝ հինգ տարի անընդմեջ օգտագործել կամ իրական օգտագործման մեջ է դրել ապրանքային նշանը:

Սակայն, պատասխանող կողմը դատաքննության ընթացքում ընդունեց այն հանգամանքը, որ իրականում «Յունիլեր Ն.Վ.» ընկերությունը «Լյուքս» /LUX/ ապրանքային նշանով «սպիտակեցնող նյութեր և այլ նյութեր լվացքի համար» ապրանքներ Հայաստանի Հանրապետությունում ընդհանրապես չեն օգտագործել:

Ուստի, հայցվոր «Գարանտոյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պահանջը բխում է «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի պահանջներից և այն ենթակա է բավարարման:

Ամփոփում
 Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132 հոդվածներով դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Հայցը բավարարել. մասնակի չեղյալ հայտարարել «Յունիլեր Ն.Վ.» ընկերության անվամբ միջազգային գրանցման հիման վրա ՀՀ տարածքում պահպանվող «Լյուքս» /LUX/ ապրանքային նշանների իրավական պահպանությունը՝ «սպիտակեցնող նյութեր և այլ նյութեր լվացքի համար» ապրանքների նկատմամբ:
 2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:
 3. Սույն դատական ակտը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ընթացքում:
- Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով պարտապանի հաշվին:

Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ս . Թ Ա Դ Ե Վ Ո Ս Յ Ա Ն

Դատական ակտի ամսաթիվը:	11-05-2011
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):	0